ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.10.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/97

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն
Բողոք բերող՝ «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ
Երրորդ անձ՝ «Մանվել Ջիլավյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝
ՀՀ ոստիկանության ներկայացուցիչներ՝ Ա. Մնացականյանի, Կ. Բաղդասարյանի,
«Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Ենգոյանի, Ա. Պարանյանի,
«Մանվել Ջիլավյան» Ա/Ձ-ի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2020-ԳԱԲ/Ծ-51» ծածկագրով գնանշման հարցում, գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 28.08.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2020-ԳԱԲ/Ծ-51» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Մանվել Ջալավյան» Ա/Ձ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2020-ԳԱԲ/Ծ-51» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «Մանվել Ջալավյան» Ա/Ձ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

Բողոքներ քննող անձին (Գ. Ներսիսյանին) բողոքը մակագրվել է 28.08.2020թ.-ին: 31.08.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գործը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/86 համարի ծածկագիրը:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 14.09.2020թ.-ի թիվ 255-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2020-2021թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/86 համարի ծածկագրով ընթացակարգի քննությունը 15.09.2020թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

16.09.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/97 համարի ծածկագիրը:

15.09.2020թ.–ին՝ ներկայացված միջնորդության հիման վրա «Մանվել Ջիլավյան» Ա/Ձ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

22.09.2020թ.-ին և 02.10.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 22.09.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 02.10.2020թ.-ին:

2. «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ն 28.08.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանության կարիքների համար՝ գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2020-ԳԱԲ/Ծ-51» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Վերը նշված ընթացակարգին, ի թիվս այլ ընկերությունների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.08.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնատող հանձնաժողովը որոշել է Ընթացակարգի ընտրված (հաղթող) մասնակից հայտարարել (ճանաչել) «Մանվել Ջալավյան» Ա/Ձ-ին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայություն¬ների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ին ընդունված N 526-Ն որոշման /այսուհետև Կարգ/ 32-րդ կետի 2-րդ մասով սահմանվում է հետևյալը. «Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման»:

Կարգի 40-րդ կետի 4-րդ մասի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան...:

Ընթացակարգի հրավերի 5.2 կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Ընթացակարգի հրավերի 8.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով:... Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է

գնային առաջարկները կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Ընթացակարգի հրավերով սահմանված է գնային առաջարկ՝ Հավելված 2-ի, հետևյալ օրինակելի ձևը՝

Հավելված 2
ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2020-ԳԱԲ/Ծ-51 ծածկագրով
Գնանշման հարցման հրավերի

Գ Ն Ա Յ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

*Ուսումնասիրելով **ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2020-ԳԱԲ/Ծ-51*** ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն առաջարկում է*
մասնակցի անվանումը

պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	***Ծառայության անվանումը***	***Արժեք*** *(ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)* ***/տառերով և թվերով/***	***ԱԱՀ**** ***/տառերով և թվերով/***	***Ընդհանուր գինը /տառերով և թվերով/***
1	***2***	***3***	***4***	***5=3+4***
1	*"Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1"*			
2	*"Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2"*			

«Մանվել Ջալավյան» Ա/Ձ-ն ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը (կցվում է բողոքին).

Հավելված 2
ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍԱՐՔ/ՏՎ-2020/Ա_49 ծածկագրով
Գնանշման հարցման հրավերի

Գ Ն Ա Յ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2020-ԳԱԲ/Ծ-51 ծածկագրով բաց մրցույթի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը «Մանվել Ջալավյան» Ա/Ձ-ն առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

Չափա-բաժինների համարները	***Ծառայությունների անվանումը***	***Ինքնարժեք /տառերով և թվերով/***	***Շահույթ /տառերով և թվերով/***	***ԱԱՀ**** ***/տառերով և թվերով/***	***Ընդհանուր գինը /տառերով և թվերով/***
1	***2***	***3***	*4*	***5***	***6=3+4+5***
1	*գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ*	*495 670*	*212 430*		*708 100*

Գտնում ենք, որ «Մանվել Ջալավյան» Ա/Ձ-ի կողմից Ընթացակարգով ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում Կարգի 32-րդ կետի 2-րդ մասի պահանջներին, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի պահանջներին, մասնավորապես, Հրավերի 5.2 կետին և Հրավերով սահմանված գնային առաջարկի օրինակելի ձևին, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ոչ թե բավարար պետք է

գնահատեր «Մանվել Ջալավյան» Ա/Ձ-ի հայտը, այլ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը պետք է մերժեր վերջինիս հայտը՝ գնային առաջարկը հրավերի պահանջներին անհամապատասխան ներկայացնելու հիմքով:

Բացի այդ, ցանկանում ենք նշել, որ «Մանվել Ջալավյան» Ա/Ձ-ի հայտով ներկայացրած գնային առաջարկում առկա է Ընթացակարգի ծածկագրի անճշտություն, մասնավորապես նշված է մեկ այլ ընթացակարգի ծածկագիր:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովի կողմից «Մանվել Ջալավյան» Ա/Ձ-ի հայտը բավարար գնահատելու վերաբերյալ որոշումը չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից և ըստ էության այդ որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 32-րդ կետի 2-րդ մասով և 40-րդ կետի 4-րդ մասով, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի 5.2 և 8.2 կետերով սահմանված դրույթները:»:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2020-ԳԱԲ/Ծ-51» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Մանվել Ջալավյան» Ա/Ձ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:
2. Պարտավորեցնել «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2020-ԳԱԲ/Ծ-51» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «Մանվել Ջալավյան» Ա/Ձ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

3. <u>ՀՀ ոստիկանության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 31.08.2020թ.-ին թիվ ՄԳ/49477-20 գրությամբ դիմել է ՀՀ ոստիկանությանը՝ հնարավորություն տալով «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ի կողմից 28.08.2020թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

Պատվիրատուն 04.09.2020թ.-ին թիվ 3/27/38634-20 գրությամբ, ներկայացնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը, հայտնել է նաև հետևյալը.

«Ա/Ձ Անուշ Պետրոսյանի կողմից «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2020-ԳԱԲ/Ե-51» ծածկագրով մրցույթի վերաբերյալ 28.08.2020թ. ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը, որ ՀՀ ոստիկանության կողմից Ա/Ձ Մանվել Ջալավյանի հայտը չի մերժվել, քանի որ վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկը ներկայացվել է ինքնարժեք և շահույթ առանձնացված տողերով, ինչը մեր կողմից համարվել է լրացուցիչ տեղեկատվություն, սակայն ընդհանուր հանրագումարը թվերով և տառերով համընկել է, ինչպես նաև Ա/Ձ Մանվել Ջալավյանի ներկայացրած գնային առաջարկը մոտ 30%-ով պակաս էր Ա/Ձ Անուշ Պետրոսյանի ներկայացված գնային առաջարկից, որը բխում էր պետության և ՀՀ ոստիկանության շահերից: Այդ իսկ պատճառով մեր կողմից Ա/Ձ Մանվել Ջալավյանի ներկայացրած հայտը գնահատվել է բավարար և ճանաչվել է հաղթող մասնակից:»:

4. <u>Երրորդ անձ՝ «Մանվել Ջիլավյան» Ա/Ձ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, թիվ «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2020-ԳԱԲ/Ծ-51» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ընտրված/հաղթող մասնակից ճանաչված «Մանվել Ջիլավյան» Ա/Ձ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ՝ Երրորդ անձ):

«Մանվել Ջիլավյան» Ա/Ձ-ն ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին և բանավոր կերպով հայտնել, որ իր կողմից ներկայացված գնային առաջարկի չի պարունակում ավելի պակաս տեղեկատվություն, քան Հրավերով սահմանված գնային առաջարկն է և իր կողմից ներկայացված գնային առաջարկում նշված ինքնարժեք և շահույթ սյունակներում նշված տառերով ու թվերով գումարը համապատասխանում են միմյանց:

5. <u>ԳԲՔԱ-LO-2020/97 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ ոստիկանության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից իր կարիքների համար գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով 10.08.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2020-ԳԱԲ/Ծ-51» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Մանվել Ջիլավյան» Ա/Ձ-ն և «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 21.08.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2020-ԳԱԲ/Ծ-51» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից է հայտարարվել «Մանվել Ջիլավյան» Ա/Ձ-ն:

iv. «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2020-ԳԱԲ/Ծ-51» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի հավելված 2-ը՝ գնային առաջարկը, սահմանվել է՝ «չափաբաժինների համարները», «Ծառայության անվանումը», «Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/», «ԱԱՀ** /տառերով և թվերով/», «Ընդհանուր գինը» /տառերով և թվերով/» սյունակներով:

v. «Մանվել Ջիլավյան» Ա/Ձ-ի կողմից «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2020-ԳԱԲ/Ծ-51» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի հավելված 2-ը՝ գնային առաջարկը, ներկայացվել է «չափաբաժինների համարները», «Ծառայության անվանումը», «ինքնարժեք /տառերով և թվերով/», «շահույթ /տառերով և թվերով/», «ԱԱՀ** /տառերով և թվերով/», «Ընդհանուր գինը» /տառերով և թվերով/» սյունակներով:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ի կողմից 28.08.2020թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին

մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (21.05.2020թ.-ի թիվ 778-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում

են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Հրավերի 5.1-րդ կետի համաձայն՝ առաջարկվող գինը ծառայության արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով:

Հրավրի 5.2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե

վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան (որոշ բացառություններով), ապա ներկայացված հայտերը հանձնաժողովի կողմից մերժվում են, քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով գնային առաջարկի շտկման հնարավորություն:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ ոստիկանության կողմից իր կարիքների համար գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով 10.08.2020թ.-ին հայտարարված «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2020-ԳԱԲ/Ծ-51» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մասնակիցներից «Մանվել Ջիլավյան» Ա/Ձ-ն հայտարարվել է «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2020-ԳԱԲ/Ծ-51» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից:

«ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2020-ԳԱԲ/Ծ-51» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի հավելված 2-ով՝ գնային առաջարկով սահմանվել է՝ «չափաբաժինների համարները», «Ծառայության անվանումը», «Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/», «ԱԱՀ** /տառերով և թվերով/», «Ընդհանուր գինը» /տառերով և թվերով/» սյունակներով:

«Մանվել Ջիլավյան» Ա/Ձ-ի կողմից «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2020-ԳԱԲ/Ծ-51» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի հավելված 2-ը՝ գնային առաջարկը, ներկայացվել է «չափաբաժինների համարները», «Ծառայության անվանումը», «ինքնարժեք /տառերով և թվերով/», «շահույթ /տառերով և թվերով/», «ԱԱՀ** /տառերով և թվերով/», «Ընդհանուր գինը» /տառերով և թվերով/» սյունակներով:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս գալ այն եզրակացության, որ «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2020-ԳԱԲ/Ծ-51» ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած «Մանվել Ջիլավյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկը չի համապատասխանում հրավերի պահանջներին՝ գնային առաջարկում բացակայում է արժեքի (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) սյունակը, որն էլ, ըստ Հրավերի պահանջի, ենթակա էր նշման:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է, ուստի և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ի կողմից 28.08.2020թ.-ին թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/97 ծածկագրով ներկայացրած բողոքը բավարարել:

Պարտավորեցնել «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2020-ԳԱԲ/Ծ-51» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել «Մանվել Ջալավյան» Ա/Ձ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

2. ընդունել «Մանվել Ջալավյան» Ա/Ձ-ի հայտը մերժելու մասին որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**